

**Ա Կ Տ Ն Վ Հ 08**  
**«ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ  
ՀԱԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ»**

գ. Ամասիա

«17» մայիսի 2013 թ.

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 190-Ա հրամանի և ի կատարումն ՀՀ Շիրակի մարզպետի 2013 թվականի ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 27 կարգադրության, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատանքային խումբը, մասնակցությամբ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյանի (խմբի ղեկավար), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Զարիկ Մուրադյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Լյովա Հակոբյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ Հայկ Սարգսյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի առաջատար մասնագետ Զորիկ Խաչատրյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի առաջատար մասնագետ Սարգիս Մելոյանի (խմբի անդամ), ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի գյուղական համայնքի ղեկավար Աղասի Ամիրյանի, Ամասիայի համայնքում կատարել է վարչական հսկողություն, որն ընդգրկել է 2010 թվականի ապրիլի 1-ից մինչև 2013 թվականի ապրիլի 1-ն ընկած ժամանակաշրջանը:

Վարչական հսկողությունն սկսվել է 2013 թվականի ապրիլի 25-ին և ավարտվել է 2013 թվականի մայիսի 15-ին:

**Վարչական հսկողության արդյունքում պարզվել է հետևյալը՝**

Ամասիայի համայնքի ղեկավարը համայնքում կատարված նախորդ վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2010 թվականի հունիսի 10-ի տեղեկանքը ներկայացրել է համայնքի ավագանու 2010 թվականի հուլիսի 6-ի թիվ 8 արտահերթ նիստի քննարկմանը և անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկել տեղեկանքում արձանագրված թերություններն ու բացթողումները վերացնելու ուղղությամբ: Սակայն վերոնշյալ նիստի արձանագրությունը